Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ.12

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի

գիտական խորհրդի 14.03.2017թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
2. Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի տարեկան հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ Հ. Հայրապետյան):
3. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
4. Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու Կ. Ա. Քեռյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատումը:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին - Առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման հարցը:

Որոշեցին – Քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

2. Լսեցին – Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի տարեկան հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին:

Ամբիոնի վարիչ Հ. Հայրապետյանը ներկայացրեց տարեկան հաշվետվությունը :

Որոշեցին – Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին - Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայցորդ Ալվարդ Սարուխանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատել Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայցորդ Ալվարդ Սարուխանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Միջին դպրոցի 7-9-րդ դասարանների հարթաչափության

հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա» ԺԳ.00.02 – դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (մաթեմատիկա) մասնագիտությամբ, գիտ. ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր Էդվարդ Այվազյանին:

4. Լսեցին – Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու Կ. Ա. Քեռյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատել մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու Կարեն Ալեքսանդրի Քեռյանի դոկտորական ատենախոսության թեման «Բազիսության, զուգամիտության և միակության հարցեր օրթոգոնալ սպլայնների համակարգերի համար», Ա.01.01 – մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ:

5. Լսեցին – Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ Ա. Ա. Սահակյան

Գիտքարտուղար Ս. Հ. Ջիլավյան